Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը
հայտարարում է 2022-2023 ուսումնական տարվա պետական կրթաթոշակով,
նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ,
առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն
հետևյալ մասնագիտություններով.

Դասիչ	Մասնագիտություն	Տեղ
Ը.00.01	Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն	1
Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	2
Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	2
Ը.00.06	Միջազգային տնտեսագիտություն	1
	Ընդամենը	6

ՀՊՏՀ-ն հայտարարում է նաև է 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման **վճարովի** հիմունքներով ասպիրանտուրայի ընդունելություն հետևյալ մասնագիտությունների գծով.

Դասիչ և մասնագիտություն	Ամբիոն
Ը.00.01 Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն	Տնտեսագիտության տեսություն
Ը.00.02 Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	Կառավարում Միկրոէկոնոմիկա Մակրոէկոնոմիկա Բնօգտագործման տնտեսագիտություն Մարքեթինգ Բիզնես վարչարարություն
Ը.00.03 Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	Ֆինանսներ Բանկային գործ և ապահովագրություն Կառավարչական հաշվառում և աուդիտ Ֆինանսական հաշվառում Վիճակագրություն
Ը.00.06 Միջազգային տնտեսագիտություն	Միջազգային տնտեսական հարաբերություններ
Ը.00.08 Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում	Տնտեսամաթեմատիկական մեթոդներ Տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր

Վճարովի հիմունքներով առկա ուսուցման ասպիրանտուրայի տարեկան վճարը կազմում է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են 25.05.2022թ.-ից մինչև 15.06.2022թ.:

Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.

1) Դիմում ՀՊՏՀ ռեկտորի անունով:
2) Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):
3) Օտար լեզու առարկայի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):
4) Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:
5) Ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի):
6) Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում) կամ տեղեկանք աշխատավայրից:
7) Անձնագիր, զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական: